



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Տաղի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւանդիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով: Մենք ստանում ենք սե-
փական ՀԵՌԱՅԻՆՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՐԱՎԱՐԱՐԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւ-
նում Թամարաշվիլի տանը):
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ը գրվում համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK»:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐԻ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արդեօք մամուլը պէտք է առաջնորդէ հասա-
րակութիւնը, թէ պէտք է ենթարկվի նրան.—
ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պետերբուրգից.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՆՆԵՐԻ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շահ-
բուլաղ:

ԱՐԴԵՕՔ ՄԱՄՈՒԼԸ ՊԵՏՐ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԷ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, ԹԵ ՊԵՏՐ ԵՒ ԵՆՔԱՐԱԿԱՆ
ՆԵՐԱՆ

„Մշակի“ գոյութեան տաճար և հինգ
տարեկան ընթացքում մենք շատ անգամ
ենք յարուցել այդ հարցը, բայց հիմա նո-
րից ստիպված ենք նոյն հարցը առաջար-
կել և պարզել նրան մեր ընթերցողներին:
Անկասկած հասարակութիւնը մեծ պա-
կասութիւններ ունի. նա անփոյթ է, ան-
հոգ է, անտարբեր է, ոչինչ իրեալներով չէ
հետաքրքրվում, գուրկ է որ և է սեփա-
կան նախաձեռնութիւնից, ենթակայ է վատ
կրքերին, անձնական հաշիւներին, չունի
անձնութիւն, չունի պարտաճանաչու-
թիւն, աղէտ է և իր իրաւունքների վերա-
բերմամբ:

Ի՞նչ է իր յարգը ճանաչող մամուլի
պարտաւորութիւնը, եթէ ոչ առաջնորդել

հասարակութիւնը, որը դեռ ևս այդքան
խոշոր պակասութիւններ ունի, ներշնչել
նրա մէջ այն, ինչ որ նրան պակաս է և
մտքաւոր այն վատ կրքերի դէմ, որոնք
դեռ ևս տիրապետող են նոյն հասարակու-
թեան մէջ:

Այդ է մամուլի բուն պարտաւորու-
թիւնը:

Բայց ի՞նչ կը լինի, եթէ մամուլը, փո-
խանակ ուղղելու, դեկլարելու, առաջնոր-
դելու հասարակութիւնը, փոխանակ հա-
սարակութիւնը իր ետեւից քաշելու, ինքն
կենթարկվի հասարակութեան բոլոր պա-
կասութիւններին և վատ կրքերին, ինքն
քաշ կը քաշ հասարակութեան ետեւից, ին-
քն կը դառնայ արձագանք հասարակու-
թեան մէջ տիրապետող բոլոր պակասու-
թիւններին, դատապարտելի սովորութիւննե-
րին, հակակրկիլ բարձր ու վարքերին:

Այն ժամանակ մամուլը չի հասնի իր
նպատակին, չի ծառայի իր բուն կոչմանը:
Մամուլը պէտք է իր բոլոր ջանքերը դրծ
դէմ մտքաւոր և հասարակութեան կործա-
նիչ պակասութիւնների դէմ, և ոչ թէ ինքն
ենթարկվի այդ պակասութիւններին:

Բայց մեզանում մամուլը, ղեկավարաբէ-
րան յատկացրած պաշտօնը չէ կատարում,
այլ դառնալով հասարակութեան ստոր
բարձր ու վարքերի արձագանք, փոխանակ
աղնայնելու հասարակութիւնը, հետ-

զհետէ անբարոյականացնում, լրբացնում է
նրան:

Օրինակ, հասարակութեան մէջ տիրում է
կին տօյա կան բարձր ու վարքը, այսինքն
երբ դուք վիճում եք մէկի հետ վերացա-
կան, հասարակական հարցի վրա, ձեր
հակառակորդը, չը կարողանալով յաղթել
ձեզ, անմիջապէս անցնում է անձնականու-
թեանը, և հասարակաց հարցերը թողած,
սկսում է դիպչել ձեր անձնական, ընտանե-
կան պատւին, —նոյնը անում է և մամուլը,
փոխանակ, ընդհակառակն, մաքառելու
հասարակութեան մէջ արմատացած այդ
կենսոյութեան դէմ:

Հասարակութեան անդամները, ընտանիք-
ները, չը հետաքրքրվելով ոչինչ հասարա-
կական հարցերով իրանց ամբողջ օրերը
անցնում են միմեանց դէմ բամբասելու,
թէ և ուրիշին բամբասողներից ամեն մէկը
ձիշդ նոյնն է անում, ինչ բանի համար
մեղադրում է ուրիշին, — և մամուլը, փո-
խանակ աշխատելու վերջ դնելու այդ կոր-
ծանիչ և ապարդիւն ժամապաճառութեանը
և դարձնելու հասարակութեան ուշադրու-
թիւնը աւելի օգտաւէտ, աւելի հասարա-
կաօրոտ հարցերի վրա, մամուլը դառ-
նում է հաւատարիմ հայելի փչացած հա-
սարակութեան, և շարունակում է մի գը-
լուի գրառվել անձնական կրքերով, պառա-
ւական բամբասանքներով, ընտանեկան
կեանքին դիպչելով, անձնական պատիւը
շօշափելով:

Եւ այդպիսով մամուլը փոխանակ առաջ-
նորդելու հասարակութիւնը ինքն ենթարկ-
վում է հասարակութեան բարոյական ստոր
զարգացմանը, փոխանակ հասարակութիւ-
նից բարձր կանգնելու ինքն քաշ է քաշու
փչացած հասարակութեան ետեւից:

Գրանում ո՞վ է մեղաւոր մամուլը,
թէ հասարակութիւնը ի՞նչ է:

Երբեք էլ, որովհետեւ մամուլը ըն-
դունակ չէ հասարակութիւնից բարձր
կանգնել և նրան առաջնորդել, իսկ հա-
սարակութիւնը, որովհետեւ մինչև հի-
մա ընդունակ է եղել իրանից արտադրել
միմյան այդպիսի ստոր մամուլ:

Գ. Ա.

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յունիսի 19-ին

Անցեալ մայիսի 8-ին, Պետրոսիկի ուսումնա-
րանի դաշինքում, մայրաքաղաքիս հայ համայնքը
ընդհանուր եկեղեցական ժողովի հրաւիրվելով
ընտրեց իր միջից, որոշեալ սահմանով, երկու
անգամ եկեղեցական հոգաբարձական խորհրդի
համար և մէկ երեցիօս, իսկ մէկ փոխ-անդամի
ընտրութիւնը, դրա հետ և մի քանի կարեւոր
հարցերի բացատրութիւնները, որոնց համար ժա-
մանակ և լուրջ խօսակցութիւն էր հարկաւոր,
ժողովականների մեծամասնութեան որոշմամբ յի-
տաձգվեցան այլ անգամիւ Այս ժողովի հետևան-
քի մասին իրան ժամանակին «Новое Время»,
«Новости» և մի քանի այլ ուսու թերթեր հա-
ղորդեցին, հայ թերթերում ևս ընթերցողը կար-
դացած կը լինի այդ մասին ժողովի այդ աջող
թէ անաջող, չը գիտեմ, (ներկայ չեմ եղել) հե-
տևանքը ներքին դրոճերի միմիատրութեան գի-
տութեանը հասնելով միմիատրութիւնը անկանոն
և անկարգ է համարում յիշեալ ընտրութիւնը և
հրամանադրում է եկեղեցական հոգաբարձական
խորհրդին կրկին անգամ ծխականների ժողով
կայացնել և ընտրել միայն և եթ երկու ան-
գամ, մէկ փոխ-անդամ և մի երեցիօս, մի և
նոյն ժամանակ չը միջամտել և չը յուզել մտքերը
կողմնակի հարցերով և բացատրութիւններով, ո-
րոնք օրէնքով արգելվում են:

Միմիատրութեան կարգադրութեան համաձայն
և հոգաբարձական խորհրդի հրաւերով, այսօր
նոյն դրոճի դաշինքում, երկրորդ անգամ կայա-
ցու այդ ծխական ժողովը, որի հետևանքի մա-
սին անա շտապում եմ յայտնել:

Հոգաբարձական խորհրդի նախագահ երիտա-
սարդ իշխան Աբամիլիք-Աղաբիւլ բացակայ գտն-
վելով նիստի բացումը դրաւոր կերպով յանձնել
էր պ. Ն. Թաղանտոսեանցին: Ժամի ճիշդ 1-ին
նիստը բացվեց. խորհրդի քարտուղար պ. Աղա-
բեան կարգաց իշխանի յանձնարարական նամա-
կը պ. Թաղանտոսեանցին ուղղած, կարգաց և
միմիատրութեան հրամանագիրը Այս ընթերցում-
ներից յետոյ մեծամասնութեան որոշմամբ պ.
Տէր-Ահալեանց ընդհանուր ժողովի նախագահ
ընտրվեց, որը և իր տեղը բռնելով, մի քանի

սողունների մասին Այստեղ է, ասում են, ապ-
րում օձերի թագաւորը, որ երկու եղջիր ունի.
ամեն օր, երբ արեգակը այնքան բարձրանում է,
որ թափում է իր սովորական կրակը, թագաւորը
հաւաքում է իր հպատակներին, խմբեր է կազ-
մում ու իջնում դէպի ցած, աղբիւրի մօտ. ջուր
են խմում ու էլի յետ դառնում: Այստեղ կան
«խօթն եղբայր» օձերը, որոնց եղբայրական սէրը
այնքան վառ է, որ եթէ վեցին սպանես, եթէ մե-
րորդը պիտի անպատճառ վրէժը հանէ իր մահա-
ցուցիչ թոյնով:

Ամեն տեղ գրաւել են նրանք: Նայում ես աղ-
բիւրի մէջ, բերեղանման հեղուկը քեզ թոյլ է
տալիս յատակի վրա ընկած ամենափոքրիկ քարն
էլ տեսնել. քարի հետ, տեսնում ես, ընկած է
կանաչ օձը: Ջրի մօտ կայ փոստի իջնան. իջնա-
նով, մի անգամ ծառան ինձ թէ չը տուեց, ասե-
նով որ վախում են ամուսն բերել, օձեր կան ա-
ծուկի մէջ: «Անցեալ օր այս սննդական երեք
օձեր կային», պատմում է ծառան ժպտալով. «ու-
րեցին սպանել, տախտակամածի տակ մտան»: Եւ
այդ սննդական պիտի նստէ ճանապարհորդը,
պիտի քնէ....

Օձերի սարսափն է, որ տիրում է այստեղ: Պատ-
մում են միայն նրանց մասին: Ասում ես, և կաշուիդ
վրայով, կարծես, միջատներ են վազում: Գու չըբա-
պատված ես դրանցով, ամեն ժամ սպասում ես,
ահա որտեղից որ է դուրս կը գան. մոխրագոյն փոք-
րորէ բռնելով, տախտակ գլուխ, չար աչքեր, եր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՀԲՈՒԼԱՂ

(Իմ յիշատակարանից)

Ա

Շահբուլաղ.... Աղբիւրների թագաւոր, թէ թա-
գաւորի աղբիւր:

—Թէ մէկը և թէ միւսը:

Մի ցածր սար է, մի սապատող, ժայռոտ
բարձրութիւն, որ ծածկված է կարծիկ թփերով
և նոսր խոտերով: Չորս կողմն անջրդի է,
չորս կողմը հեռու տարածութեան վրա ամեն
ինչ մուռնում է, տապալկվում առանց ջրի: Տեղը
միանման դաշտավայր, որ այս փոքրիկ լեռնաշղ-
թայի պատուանդանից սկսվելով, ձգվում է դէպի
արևելք, հորիզոնի վրա մի կող է կազմում և
թեքվում անցնում է դէպի Կուր գետը: Եւ այստեղ,
այս մէջքը ցցած սարի տակից դուրս է վազում
մի մեծ ջուր, բաժանված երեք գետակների, ո-
րոնք ամառ ձմեռ քչքչում են քարէքար ընկած,
միանում են, գնում են ներքե, ուր մեծ գործեր
պիտի կատարեն, ծառեր, այգիներ ջրին, բնակիչ-
ների խաղված բերանը զովացնեն: Ո՞րտեղից է
գալիս նա, այդ պարզ, բերեղանման հեղուկը

այնպիսի առատութեամբ, այնպիսի շուքով:

Աղբիւրների թագաւոր.... Ոչ ոք նրան այստեղ
չէր սպասում, ոչ ոք նրանից խմելու յոյսը չու-
նէր. Կուրի տափարակներում պտտող մարդը
ջուր պիտի վերցնէ հեռաւոր տեղերից բերած
արհեստական առուներից, որոնց մէջ լուծվում է
կիրող արեգակի տակ փոշիացած հողը, կազմելով
մի պղտոր զանգուած: Իսկ այստեղ.... Նայելի,
տես. այսօր մայիսն է, այսօր, մի քանի ժամ ա-
ռաջ, սարերում թողել ենք թարմ կանաչ, որ
նոր է բացվում, նոր է զարգարվում. բայց այս
կողմերում անա խոտը դեղնել է, մեռնում է,
այրվում: Այլովում է արագութեամբ, ինչպէս ա-
րագութեամբ դուրս է եկել, բարձրացել: Նրա
կեանքի մէջ կար մի տենդային գործունէութիւն,
մի սաստիկ շտապողական անհամբերութիւն, և
ահա, կարծես, ամբողջ ոյժը սպառած այդ գործու-
նէութեան վրա, չորանում է, ոչինչ հետք չը
թողնելով, ոչինչ օգուտ չը տալով, նրա ամբողջ ոյ-
ժը կլանվել է, և մեռնելուց յետոյ էլ նրան չին
գնում անասունի առաջ, գիտեն որ նրանով փոք-
րի կշտանայ:

Արեւը, ինչպէս ասում են, կծում է, ոչ թէ տա-
քացնում. հողը փոշիանում է, ամեն տեսակ թու-
նաւոր միջատներ վաղուվաղ են անում: Իսկ
աղբիւրների թագաւորը մի չափով, միատեսակ
ձայնով դուրս է թափում իր բարակ ալիքները....
Ուզում ես ասել, որ ցածրիկ սարը բարձրացրել
է իր ողնաշարի սապատը, որպէս զի իր փորում

մի մեծ լիճ կազմէ այդ ջրի համար, մի լիճ, որ
յաւիտենական լաւարի մէջ է ընկղմված և
կեանք է տալիս այն փոքրիկ ու մեծ ձկներին, ո-
րոնք երբեմն դուրս են գալիս լոյս աշխարհ: Ա-
սում են թէ շատ հեռուից է գալիս այդ ջուրը.
ասում են թէ Գովիչա լճի մօտ, չը գիտեմ որտեղ,
ջրի վրա յարդ են ածել, յարդը Շահբուլաղ է
դուրս եկել: Ասում են, ինչ իմանաս....

Աղբիւրի վրա բուսականութիւնը կենդանու-
թիւն է ստացել. կանաչ թփերը, պտուտակները
գիղեցիկ անկարողութեամբ գրկախառնվել են, մի-
մեանց գրկել: Հետևաբար ինչքան գիղեցիկ տեղ
է երկար ճանապարհից, խեղդող ջերմութիւնից
հանդադարեալու: Անհող ընկնես նրա մօտ, ոտ ու
ձեռքը լուռնաս, կրծքի վրա ընկնես, բերանդ
ջրի վրա դնես, գէթ առ ժամ մոռանաս քիչ
տանջող ճանապարհի թողը, ականջ դնես սիրուն
քչքչողին, մէջքի վրա պառկես, աչքիդ հանդա-
տութիւն տաս կապույտ երկնակամարը դիտելով:
Ի՞նչ լաւ կը լինի:

Բայց զրուշովիւն.... Հանդիստ սրտով գնալ,
մօտենալ, նստել, ձեռքը դէպի ջուրը տանել չես
կարող: Վախ է, մեծ ահ կայ:

Բ

Սարը, որ ծնում է այս աղբիւրը, օձերին է
պատկանում: Կովովում է լայն-դաղի և մայիսի
սկիզբներից մինչև աշնան ցրտերը դիւթված է,
անմարմնալի:

Ինձ պատմում են հրաշալի բաներ այդ չար

խօսքով բացատրեց ներկայ ժողովի նշանակու-
թիւնը, հիմն ունենալով միջնադարի հրամա-
նադրութիւնը և ապա առաջարկեց ժողովական-
ներին ընտրել երկու անդամ, մէկ փոխ-անդամ
և մէկ երեցփոխ Նաև բարեւոյ համարեց ժողովա-
կաններին յայտնել, որ առհասարակ միանգա-
մայն ընդ միշտ սովորութիւն դարձնել ընդհա-
նուր ժողովների օրադրութիւնները իսկոյն և եթ
կազմել, վերջը կարգով, կարևոր փոփոխութիւն-
ներն անել և ստորագրութեամբ փակել նիս-
տը: Այս ընդունված ձևը այն օգուտն ունի, որ
յետոյ տարաձայնութիւնների առիթ չի տրվի,
ինչպէս առհասարակ լինում էր:

Այս առաջարկութեանը ժողովը իր միաձայն
հաւանութիւնը տալուց յետոյ, մի քանիսները
նախագահից իրաւունք խնդրեցին նոյնպէս առա-
ջարկութիւններ անելու: Նախագահը այդ խնդր-
ները մերժեց, որովհետև ընտրութիւնը պիտի
սկսվէր: Ժողովին ընդամենը ներկայ էին 55 հո-
գի ձայն ունեցողներ: Ոմանք, նոյն իսկ խորհրդի
անդամներէն, բացակայ էին, մի քանիսներն էլ
ամառախնայներու մէջ էին... Քեթիկիսերի վրա
գրած անուններից երեսուցի չափ կանդիդատներ
առաջարկվեցան, դրանցից մի քանիսները խնդ-
րեցին իրանց ազատ համարել քուէարկութիւնից:
Քանի չափ արկղներ դրվեցան և նոյն թուով
կանդիդատներ քուէարկութեան ենթարկվեցան:
Նախագահ, պ. Տէր-Սահակեանց, մէկ-մէկ կար-
գում և հրաւիրում է ժողովականներին քուէները
գցելու: Նիստը ընթանում էր կանոնաւոր, ա-
ռանց որ և է պարտիկ, կարգապահութիւնը օրի-
նակելի էր: Ընտրվեցան խորհրդի անդամի պաշ-
տօնով պ. պ. Բոֆիկներ՝ Վարդանեան և Յարութի-
նեան, առաջինը՝ 43 ձայնով ընդդէմ 12-ի,
երկրորդը՝ 42 ձայնով ընդդէմ 13-ի: Փոխ-անդամի
պաշտօնի համար պ. Տէր-Սահակեանց 24 քուէ էր
ստացել, բայց որովհետև ընտրող ձայնը օրէնքով
ներկայ եղողների կէտից աւելի պիտի լինի, վստա-
նորս կրկին անգամ թերթիկների վրա քուէարկ-
վեց և 32 ձայնով ընտրվեց փոխանդամ Պ.
Սուլթան-Շահ, որը նոյնպէս 24 ձայն էր ստացել,
նոր քուէարկութեան չենթարկվեց, որովհետև նա
առանց այն էլ փոխ-անդամի պաշտօնով մաս-
նակցում է խորհուրդներին: Իսկ երեցփոխի պաշ-
տօնով ընտրվեց պ. Ն. Թադևոսեանց 42 ձայ-
նով ընդդէմ 13 ձայնի: Բուռն ծափահարութիւնը
հասարակութեան կողմից ստացուեց, որ պա-
րոնը եկեղեցուն ագնուլեամբ ծառայել է և
հրաւիրվում է նորից ծառայելու: Ապա օրադրու-
թիւնը կարգաւոր, բոլորը ստորագրվեցան, նիստը
ժամէ 1/2-ին փակվեց և ժողովականները ցրվե-
ցան ընդհանրապէս դռն: Երեցփոխանական խնդրը
ներկայումս մի պաշար է հայ եկեղեցում, որ
յուզելու չափ վրդովեցնում, անհանգստացնում է
տեղին հայ ժողովրդի դարևոր անդորրութիւնը:

Այս դեպքում Պետերբուրգի հայոց եկեղեցու ե-
րեցփոխանութիւնը բոլորովին ուրիշ պայմանների
մէջ է եղել: Նշանակվել է մէկը և չարունակ կա-
ռավարել է կամայականութեամբ, ստանալով ե-
կայն իրան, երեկ մէկը սպանված ընկած էր ճա-
նապարհի փոշիների մէջ: Օձային շուռչ է ամեն
տեղ: Հեռուից մի թուշի ձայն է դալիս. որ-
քան և խելքը գլխից պահես, չես կարող չը հա-
ւատալ որ երգողը ոչ թէ մի տխուր թուշու է,
այլ նոյն ինքն օձերի թաղաւորը, որ գուցէ հա-
ւաքում է իր հպատակներին հեռաւոր տեղեր
պատերազմի գնալու: Նրանք պատերազմում են,
պատմում է ժողովուրդը, նրանք ունեն ամեն մի
դէպքի համար առանձին ձայներ. դնում են խմբե-
րով, պատերազմում մի խուլ անխիտութեամբ, յետ
հաջորդ շատերը վրաւարտված, կարատած մարմն-
ներով: Ամեն մի թուշը սայլապան հաւատաց-
նում է ձեռք իր սկսած դէպքի վրա ամեն համ-
դէշ չարքում գործելու:

Այսպէս է օձերի թաղաւորութիւնը, և աղբիւր-
ների թաղաւորը նրանցն է: Արարախանար մար-
դը ահ ու զոռով է մտնում, աշխատում է քիչ
նայել, քիչ ջուր խմել:
Եւ ջուրն էլ խմելու ջուր չէ: Փոր է ուռցնում.
չատ խման աչքախի մի արեգակի տակ՝ ջերմը
պատրաստ է քեզ համար:
Գ

Արարախանար չէ այս կողմից բնակիչը մի-
այն, թուշը դիւղային, որ մի քանի ամիս հարե-
ւանութիւն է անում օձերի, կարիճների և այլ
այս տեսակ պատիժների հետ:
Երեկ ես տեսա՝ նրանց գիւղը Այդ ցած ըն-
կած, տափակ, մոխրագոյն երկնքի տակ գետնից

կեղեցուց հոխ ընակարան և լաւ ուժիկ. իսկ ե-
կեղեցում ինչից, ինչ բանի համար, ինչքան գու-
մար արդիւնք ստացվեց, կամ ուր դնաց,—այդ
տեսակ բաներ հարցնել չէ հարկաւոր: Այդ է
պատճառը, որ այստեղ չենտեղի յիշում ենք թէ՛
պ. Թադևոսեանց երեք տարի սրանից առաջ
ժողովրդից ընտրվելով այդ պաշտօնով առանց
ուժիկի և բնակարանի, տիրող խառնափնթիւրու-
թեանը ինչպէս ինքնուրույն եկեղեցու եկեղեցական հայրեն-
քը կարգի բերեց: Այստեղ մենք դրվելու համար
չենք խօսում, այլ զուտ ճշմարտութիւնը երևան
հանելու նպատակով թերեւս պ. Թադևոսեանց
կարողանայ աւելի զօրաւոր միջոցներով նպաս-
տաւոր կացութեանը իր ծառայութիւնը եկեղեցուն
և այս եռամեայ շրջանում:

Ընթերցողը տեսնում է, որ ներկայ ժողովի
հետևանքը նոյնն է, ինչ որ մայիսեան ժողովին.
համարեա նոյն մարդիկ էին ընտրվել այդ պաշ-
տօնների համար, բայց փոխ-անդամից, որը ընտ-
րութիւնը յետաձգված էր: Յոյս կայ՝ այս անգամ
առանց միջնորդութեան միջամտութեան, ընտ-
րութիւնների հետևանքը վաղորդ առաջարկվի թե-
մակալ առաջնորդի հաստատութեանը, որով մի-
անգամայն վերջ կը տրվի անհեթեթ խօսակցու-
թիւններին, որոնք տեղի ունենալով զանազան
շրջաններում, լարում էին ժողովրդի յարաբերու-
թիւնը և քանդում էին ժողովրդի համայնական
կազմութիւնը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ինչպէս յայտնի է, յուլիսի 15-ին կը տօնվի
կիսովում Ռուսաստանի միլիտարիան 900-ամեայ
յօթելանքը: Այժմ լրացրինք հաղորդում են որ
և Պետերբուրգում դիտարկութիւն կայ նոյն օրը
յիշեալ տօնը մեծ հանդիսով տօնելու:

«Новости» լրագիրը հաղորդում է որ ոչ թէ
միայն հրէաները անդադար գաղթում են Ռու-
սաստանից դէպի Ամերիկա, բայց նոյն իսկ
Լեհաստանի շինական ազգաբնակչութիւնից շա-
տերը: Լեհաստանում հրատարակվող լրագիր-
ները խօսքներն նայելով Լեհաստանում գրե-
թէ մի գիւղ, մի տուն անգամ չը կայ, որից
մէկ կամ երկու գիւղացի գաղթած չը լինէին դէ-
պի Ամերիկայի Միացեալ-Նահանգները, կամ դէ-
պի հարաւային Ամերիկա:

ԿՕՁՕՐԻՑ մեզ գրում են. «Շօքերի սաստկանա-
լուն պէս» Թիֆլիսից Կօջօր եկողների և ամառա-
նայնի վարձողների թիւը հետզհետէ շատանում
է: Արդէն շատ քիչ ամառանոց է մնացել, որը
վարձված չը լինէր:

Ստացանք ԱՍՍԱՅԻՍՏԻՑ 37 անձանց ստորա-
գրութեամբ մի հերթում մեր թղթակից Ա. Աս-
ի նամակի, որի մէջ պարունակ խօսում է երեցփոխ-
անական հարցի մասին Աստուծոյ Պատուելի

կաթած ողորմելի խրճիթներում այրվում, տապալ-
վում են մարդիկ, իրանք էլ չիմանալով որ տա-
պալվում են: Գիւղը բաւական հեռու է գնացել,
տները տեղաւորված են մեծ մեծ այգիներում և
պարտեզներում: Քար չը կայ. եղեգնայ պատերը
և խոտի կտուրը պիտի պաշտպանեն արևից և
արևի ամեն մանր, չար և ետաւեր արբանեակնե-
րից. ոչ ձայն կայ, ոչ աղմուկ. տափարակը ար-
ձապարը տալու, ձայն մեծացնելու ընդունակու-
թիւն չունի: Գիւղի խառնութիւն առաջ, փոստի
ճանապարհի վրա, ընկած են մի քանի սեպցած,
այրված մարդիկ, որոնք մեծամեծ փախկիներ
տակից ծուլութեամբ նայում են մեզ:

Ո՛չ, ինչ համեմատութիւն լեռնային գիւղի
հետ: Լեռնականը կայուն է քարալի ծայրին
կրկու կամ երեք պատ, ծակում է դուռը, այդ-
տեղից բայ է անում, տանում դէպի խոր ձորի
յատակը մի համարձակ, դալարուն կածան. ապ-
րում է այդ տան մէջ, բարձրից ցայց է տա-
լիս, որ ապրում է այնտեղ, ինչպէս իր սարն
է հրամայում: Գիւղի կանաչը հեռուից է հաս-
նում քեզ այն ժամանակ, երբ քո հաշուով դու
չատ պէտք է պտղոտներ դործես անդունդների
և ձորերի վրայով. փոքրիկ մանուկը, չուրը, ա-
քաղաղը շատ հեռուից են իրանց ձայնը քեզ
հասնում: Իսկ այստեղ, այս տափարակներում
ցածրիկ ծառերը կարծես իրանց ոտներով պա-
հում են երկնքը, որ չընկնի. ամեն ինչ ճնշված
է, հողին կպած: Վաղ տուտուտ արեգակը ծա-

անձինք, որոնք հերքում են Ա. Աս-ի նամակը,
դժբաղդապէս այնպիսի երկար և ոճի կողմից
արեւան անկարգ կերպով գրած նամակ են ու-
ղարկել մեզ, որ մեզ անհնարին է տպագրել այդ
նամակը: «Մշակի» էջերում Բոլորը, ինչ որ առ-
ված է այդ երկար նամակում, կարելի էր ամփո-
փել մի կարճ նամակում, կամ նոյն իսկ մի ներ-
քին լուրի մէջ:

Մեզ խնդրում են տղել հետեւեալը: «Տանակերտ
գիւղի մօտ գտնվող Բերդակ անունով ուխտատե-
ղին, որը կրում է Ս. Գովհաննէս Մկրտիչ անու-
նը, հին ժամանակներից աւերակ լինելով, այժմ
տանակերտիցները յանձնառու եղան վերանորո-
գել: Այդ վերանորոգութեան համար հարկաւոր
գումարը մօտաւորապէս 1500 ռուբլու է համա-
լու: Ցանկացողները իրանց թէ՛ դրամական նուէր-
ներով և թէ՛ իրեղեններով յիշեալ ուխտատեղի
վերանորոգութեան գործին օգնելու, թող բարե-
հաճեն իրանց նուէրներն ուղարկել հետեւեալ
հասցեով. Сел. Верхние Акулисы, Сардары Иса-
гулянцы.»

Մեզ գրում են ԿԻՁԻ-ԱՐՎԱՍՏԻՑ, որ յունիսի
12-ին մի հին-նախնական հայ երիտասարդ, Ար-
շակ Գանիկէով, լողանալով քաղաքից չորս վերստ
հեռու գտնվող մի լճակի մէջ՝ խեղդելով է: Ըն-
կերները, որոնք այդ լճակից ոչ հեռու քեֆ էին
անում, վրա հասնելով նրանցից մէկը՝ շուշեցի
Բալաբերով, ընկնում է ջուրը և հանում է ջրից
ու ափն է հասցնում ողորմելուն: Բայց երիտա-
սարդ Գանիկէով արդէն անշնչացած դիակ էր և ոչն-
չով չը կարողացան նրան ուշքի բերել: Երկու
օրից յետոյ դժբաղդին թաղեցին:

ԹԵԼԱԽԻՑ մեզ գրում են, որ այդտեղի արհես-
տաւորների համբարները, անցնալ մայիս ամիսն,
եռանդով սարքում էին իրանց քեֆ և բը, որոնց
անուանում են ընդհանուր անունով մատաղ:
Այն բաւական նշանաւոր գումարները, որ հաւա-
քում են իրար մէջ արհեստաւորները քեֆ անե-
լու համար, գործ են դրվում միայն ուսու-
նելու վրա և ոչինչ մասն ու բաժին չեն հա-
նում մի որ և է բարենպաստ կործի համար:

Անցեալ մայիս ամիսն, ինչպէս մեզ գրում են
ԹԵԼԱԽԻՑ, այդտեղի առևտրական տան հիմնա-
դիր և քաղաքի հայոց դպրոցների հոգաբարձու
Բաղդասար Բաղդոյեան վախճանվեցաւ: Համաձայն
հանդուցեալի արած կտակի, նա թաղվեցաւ ա-
ռանց քեղեկի, որի փոխարէն 100 ռուբլի տրվե-
ցաւ Թելախի հայոց ուսումնարաններին և 50 ռ-
Ա. Երրորդութեան եկեղեցու նորոգութեան համար:

ՇԱՀՆԱՋԱՐ հայ-կաթովի գիւղից մեզ գրում
են: «Մեր գիւղի հոգևոր առաջնորդ, Հ. Սարգիս
վարդապետ Եղործեան, տան և վեց ամիսից ի
վեր արտասահմանում անցնելուց յետոյ, մայիս
ամսի վերջերում վերադարձաւ Շահնաջար, որտեղ

գում է ցածրից և ոչ մի ծառ, ոչ մի տեղ այդ
հարթավայրը այնքան չէ բարձրացնում, որ ծա-
գող արեգակի կարմիր-սպիտակ շառաւիղը քիչ
կանգնէ, հանգստանայ. նա սահում է, շտապով
անցնում դէպի հեռու, բազմում սարերի գլխին:
Մէկ էլ տեսար, օրվայ լուսատուն վաղեց, բարձ-
րացաւ, կանգնեց, միակից, կրակ պիտի թափէ
փախչէ. դուրսը չմտն է, ականջներում արիւնը
ստատիկ դարձում է: Կայ և մի անշունչ պատիժ,
մանր կծու փոշին այրում է, տոչորում, քրտինքը
ցկրացնում:

Էլ ուր փախչի մարդը, այն կողմում երկար
ճանապարհ, այս կողմում մեծ և գեղեցիկ աղ-
բիւր, որ սակայն օձերին է պատկանում:

Գ
Բայց ինչու է Շահնաջար—թաղաւորի աղբիւր:
Այս թաղականութիւնն ինձ թիւղաղում է հը-
նութիւնը: Աղբիւրի կողքին տեսնում եմ պարա-
կական ոճի մի կիսաւեր շինութիւն: Կայ մի
փոքրիկ դակիթ, որ քարեայ սիւներով է զարդա-
րած: Մտնում եմ դակիթը, մի փոքր դուռ դէպի
ներս և հրաւիրում: Մտնալով որ օձերի թա-
ղաւորութիւնը ամենից շատ աւերակներն է յար-
գում, մտնում եմ ներս, կիս եմ տալիս դատարկ
շինութեան կողմ յատակը. քայլերս խուլ թն-
դին են հանում բարձր, կամարակապ կտուրի
տակ: Խորհրդաւոր կիսամթութիւն է տիրում.
կողքի պատի մէջ կայ մի նեղ պատուհան, իսկ

մեծ սիրով ընդունվեցաւ. իր ժողովրդից, և դիմ-
ւով իր ժողովրդին մի գեղեցիկ ու ազդու բանա-
խօսութիւն արաւ եկեղեցում:

Կիրակի, յուլիսի 3-ին, «Եւրօպա» այգիում պ.
Տէր-Կաթեանց, դերասանական խմբի մասնակ-
ցութեամբ կը տայ «Բարեկենդան» կօմէդիա 2
գործողութեամբ, հեղ. Ա. Մ.-ի, և «Արեւոդ
դարբին» կօմէդիայի առաջին պատկերը: Պ. Ար-
տաշէն Գալոբեանը անտրակտում կերպէ: Սկիզբն
է 8 ժամին:

Լուսն է, որ Ներսիսեան դպրոցի յունիսի
25-ի հոգաբարձական նիստում, ներկայ եղող
հոգաբարձուների մեծամասնութեան վճռով ար-
ձակվել են Ներսիսեան դպրոցի դասատուի պաշ-
տօններից պ. պ. Ա. Ա. և Գ. Բ.: Պ. Ա. Ա.
ընդհանուր պատմութեան դասատու էր, իսկ պ.
Բ. ուսուցանում էր արամեաբանութիւն և հոգե-
բանութիւն:

«Արաբի» խմբագիր պ. Գուլամիրեանց ՊԵ-
ՏԵՐՈՒՐԻՅԻՑ հեռագրում է մեզ, որ յունիսի 29-ին
մամուլի տակից դուրս է եկել «Արաբի» երկ-
րորդ տետրակը և ուղարկվել է բաժանորդներին:

Ֆէօդոսիայից «Нов. Время» լրագիրն գրում
են, թէ այնտեղ հանդէս են գրված Ի. Ալեքսան-
դրով պատկերները, որ պատկերել է հռչակաւոր
նկարչին իշխան Գոնդուկով-Կորսակով Թիֆլիսում
կառուցվող Փառքի Տաճարի համար: Երկուսն ևս
մեծագիւր պատկերներ են: Մէկ պատկերի վրա
նկարված է Նիկոլայ Պավլովիչ կայսրի և նրա
ժառանգի Գէլէնշիլի գալը սաստիկ փոթորիկի ժա-
մանակ: Նրանք դնում են նաւակով «Съверная
Звезда» շոգնակից, որը հեռուից երևում է:
Նաւի մի ծայրում նստած է կոմս Ֆ. Գէյդէն: Ա-
փի վրա սպասում է բերդապահ զօրք: Միւս
պատկերը ներկայացնում է զօրքերի ափ իջնելը
1839 թվին Սուբաշիում: Երևում են եօթն 80
թնդանօթներ կողմ նաւեր, որոնցից «Սիլիստ-
րիա» նաւը առաջին տեղն է բռնում: Այդ նաւի
հրամանատարն էր հռչակաւոր Նախիձով. նաւե-
րից թնդանօթաձգութիւն է լինում. բազմաթիւ
նաւեր գլխուղորդով լողում են դէպի ափը, մի
առաքատաւոր նաւում գտնվում են Բանե-
սկի, Ծովպետ Լազարեւի, Ֆիլիպսով և Կրաքե-
մի և նոյն նաւի մէջ գտնվում էին և մի քանի
դէկլարիստներ, որոնք որպէս զինուորներ ծառա-
յում էին այն ժամանակ: Երկու պատկերներն ևս
սովորական հմութեամբ են նկարված. վերջին
պատկերը այն առաւելութիւնն ևս ունի, որ ին-
քեն նկարիչը ականատես է եղել այդ տեսարա-
նին:

«Մշակի» № 73-ի մէջ գետնից խմբագրու-
թեան կողմից վերին-Ագուլիս ուղղված պատաս-
խանում սխալմամբ տպված է Լ. Թ. տառերը,
այն ինչ պէտք է լինէին Գ. Թ. տառերը:

մի ուրիշը, աւելի լայնը, շինված է վերից, առաս-
տաղից:
Ինչ է սա. բաղանիք թէ հին ձմեռոց որ և է
գոռող պետի: Չես հասկանում: Բայց երևակայու-
թիւնը կապված չըլաւայ աւերակների հետ թող
է տալիս իսկոյն դնել այդ գաւթում կամ նրա
մօտ մի ուրիշ շինութեան մէջ արեւելեան բորբո-
ղած գլխաւորին: Եւ ինչն է արեւելում ինձ երևա-
կայել մի տաք և խաղաղ երեկոյ. դաւթում նրա-
տած է մի խան կամ շահ, որ զլլացնելով Շահ-
բուլաղի մաքուր ջուրը իր զաւիանի մէջ, մտիկ է
անում իր մերկ հիւրիներին, որոնք լողանում են
աղբիւրի մէջ: Գրից հասարակ մահկանացուի
աչքը չէ կարող տեսնել մարդաբէ խոտացած
այս դրախտը, որ շրջապատած էր մեծ պատկերով,
որոնց հեղեղներ այժմ էլ մնում են: Եւ հոր բըռ-
նակալ բայ է թողնում բերանից Շիրազի անու-
շահոտ ծխախոտի կապույտ ծուխը, նայում է աղ-
բիւրի հիւրիներին, արժարձում է իր մէջ արեւելեան
բողբ, որ այնքան սաստիկ է, այնքան տոչորում
է, ինչպէս և այստեղի արեգակը...
Որքան իրապաւոյ մարդ լինես, չես կարող
այսպիսի ենթագրութիւններով չը պաշարել:
Ինչ անես, քեզ հարկաւորում են: Հնութիւնը կան-
գնած է առջիկ լուռ ու մունչը, կատարեալ աւե-
րակային յամառութեամբ, տալիս է մտքի բազ-
մաթիւ հանելուկներ, լուծիւր, ինչպէս ուղում ես:
Այս դեռ աչքիդ առաջ կանգնած հնութիւնն
է: Իսկ այն, որ պատկում է օձերի սարի գլուխը

«Աշխատի» № 70-ի մէջ երկու սխալ էին մտել. մինքն իդիլիքից գրած ներքին լուրերունն է, որ տեղ առած էր թէ հոգաբարձու-երեցիօսի Ղ. Ք. Գրիգորեան հրաժարել է իր պաշտօնից, այն ինչ լուր կայ թէ պարոնը միայն ղեկավարութիւն ունի հրաժարելու իր պաշտօնից: Երկրորդ սխալը նոյն համարի բանասիրական բաժնումն էր. այդ յօդուածի առաջին երեք, երկրորդ սինակի, երկրորդ տողում փոխանակ թ. գիւղի պէտք է լինի ի. գիւղը, իսկ երկրորդ երեքի առաջին սինակի վեցերորդ տողում փոխանակ Ք. Գրիգոր պէտք է լինի Բ. Գրիգոր:

Անցեալ անգամ հաղորդեցինք, որ Ներսիսեան զարդի մեծագույն ջանքով իր պաշտօնից Ռեբեկայի էլի տեսուչների անվերջանալի փոփոխութիւններ, որոնք առաջ են գալիս, ոչ թէ անմիջապէս տեսչի անձնաւորութեան անարժան լինելուց, այլ այն ինտրիգաներից, որոնցով չըջապատւած է Ներսիսեան զարդը, և որոնք խեղդում են այդ զարդի առաջնորդութեան գործը: Այդ ինտրիգաներին չէր կարող անկասկած դիմանալ Բեքմազարեան ջանքան, որքան էլ նա սովորած չը լինէր մեր զարդական կեանքի բազմազուլու և միշտ գործունի ինտրիգաներին, քանի որ նրա դէմ վաղուց արդէն գործում են ոչ թէ նրա մշտական հակառակորդները, այլ և նրա բարձր, որոնք թէ մի տարի առաջ պաշտպանեցին նրա տեսչական կանդիդատութիւնը, բայց այժմ դարձել են նրա կատաղի թշնամիները, մի-միայն այն պատճառով, որ հայր Բեքմազարեան քաջութիւն ունեցած թիֆլիսի ֆամիլիայի եկեղեցու անդամը, որ թէ միտնալով, որ թէ Արքեպիսկոպոս թէ նրա ապօրինի գործունէութեան պաշտպանները Ներսիսեան զարդի հոգաբարձուներ են իսկ թէ ինչ կայ կայ ֆամիլիայի եկեղեցու փոփոխութիւն Ներսիսեան զարդի մէջ, այդ թողնում ենք հասարակական կարծիքի դատաւճիւր, որին անկասկած լաւ յայտնի է թէ որտեղից են սկսւում այդ ինտրիգաները, և թէ որոնք են այդ գործողութիւնների հետեւները:

«Ручка. Вѣд.» լրագրին հաղորդում են լիւրանից (Շիլլիցարիայից), որ յունիսի 18-ին այնտեղ ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց յայտնի ռուս հրապարակախօս և համամատական աշխարհագրութեան ու ստատիստիկայի պրօֆ. սոր Լէվ Խիլ Մէնիկով:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեցաւ «Աղբիւր» յուլիսի № 7 տետրակը: Այդ տետրակի մէջ աչքի են ընկնում զօրօտ Գովիսի Շիլլիցարեան-Շիլլիցարեան և նրա դուստր՝ Թագուհի Շիլլիցարեան: Մէլի-Աղբիւրեանի բաւական նման պատկերները, և հանգուցեալ վիպագրողի ու նրա աղջկայ գեղեցիկ ոտանաւորները:

Եթէ ճանապարհի ընկերը քիչ ծանօթ է այս տեղերին, չէ կարող չը նայել սարի գագաթին. երբ մօտենաս փոստային իջանին, նա կը բռնէ ձեռքը և ցոյց կը տայ այն հին շինութիւնը և կ'սկսէ, «տես, հայր եկեղեցի է»: Իսկ ես այդ չորս բառից քիչ աւել տեղեկութիւն իմանալու բախտն ունեմ իջանի ծառայի խօսեցնում եմ աւերակի մասին, տեսնում եմ որ նա ինձանից թուրք հնասէր է. բարձրացել է սարի գագաթը, դանա-կով քերել է խաւարձանը, որ շինութեան առջնութեան է, կարդացել է նրա վրա. «Ես շահանշահ որդի Աշոտայ կանգնեցի զաւազ հողոյ իմոյ».... Տպիւս է ինձ մի թղթի կտոր, որի վրա գրել է այդ արձանագրութիւնը:

Գնա, տեսնել է հարկաւոր, մէկ էլ քերել... Բայց ինձ ամեն կողմից խորհուրդ են տալիս յետ կանգնել և էլի սկսում են օձերի, նրանց թագաւորի, եթէ օձ-երգայիների պատկերները:

—Իսկ դու ինչպէս ես գնացել և ինչ է նշանակում այն նեղ կաճանը, որ ոլորվում է գագաթին ի վեր:

—Այն ժամանակ ձիւնը նոր էր հալվում, այն ժամանակ էլ այդ կաճանով մարդ է գնում:

Յետոյ հնասէր ծառան պատմում է ինձ թէ սարի գագաթը, այդ աւերակներից սկսած մինչև աղբիւրը շինված են աստիճաններ, այնպէս որ բարձրանալիս չես յոգնում: Ահա աւելի մեծ հանգիստ, աւելի խոր, հետաքրքրական: Այդ հանգիստը չէ, որ աղբիւրի մօտ աւերակներին էլ նը-

Ամերիկայի Նիւ-Եօրկ քաղաքում հրատարակւող հայերէն «Արեգակ» շաբաթաթերթը (խմբագիր Զ. Էլիսեան), յայտնում է որ շաբաթաթերթի տարեկան գինը Թիւրքիայի համար 2 և կէս մէճիս է, վեցամսեայ 1 և կէս մէճիս, իսկ Եւրոպայի ու այլ երկրների համար տարեկան գինը 12 Ֆրանկ է, վեցամսեայ 7 Ֆրանկ: Ճանապարհածախար խմբագրութեան վրա է: Բաժանորդագիրը կանխիկ վճարելի են: Ծանուցումներ ընդունվում են հայերէն, անգլիերէն և ֆրանսերէն լեզուներով: Գրվել ցանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցեով. To the Editor of the Aregak, Stirling (Morris Co.) N. J. U. S. America.

ԿՕՋՕՐՈՅ մեղ գրում են: «Նոր աւանապետ (НОВАЯ ПЕЧАТ) պ. խալիվով ընտրվելով դեռ ոչինչ նոր կարգադրութիւն արած չէ Կօօրը բարեկարգելու համար: Ընդհակառակը կարծես Կօ-Ջօրը այս տարի նոյն իսկ մի քանի քայլեր արել է դէպի յետ: Օրինակ՝ ոչ մի տարի Կօօրի փողոցները այդ աստիճան կեղտոտ չէին, որքան այս տարի, փողոցները ծածկված են թողով, աղբով, տները ու խանութները ինչ ահա զգում են փողոցների վրա և այդ բոլորը շատ հազիւ է աւելվում, այնպէս որ զբոսնորդները դժուարանում են մինչև անգամ մանկալ փողոցներում: Անցեալ տարի աւանի սկիւղ էր և աւելի լաւ էր պահւում, քան թէ այս տարի: Բացի սրանից պէտք է ասել, որ աւանի բազարում ծախվող մթերքները այս տարի համեմատելով շատ թանկ են և ծախող խանութպանների վրա հակողութիւնը բաւական թոյլ է. մեղ պատահել է տեսնել բազարում առած գարի, որը կիսով չափ աւելում էր խանութում: Թիւրք հացը, մանաւանդ սուր, շատ անգամ հում է լինում: Այնպիսի կենսական պիտոյքներ, ինչպէս հաւ, ձու, իւղ և այլն թանկ են և այն պատճառով, որ խանութպանները դեռ ևս մրցութիւն չունեն, և ամեն բանի վրա ուղած գին են նշանակում, իսկ այդ տեսակ մթերքներ ծախող մօտակայ տեղերի գիւղացիները դեռ չեն երևում Կօօրում, զբաղված լինելով հոնձով և դաշտային աշխատանքներով, որոնք այս տարի շատ ուշ պիտի վերջանան, եկած յորդ և շարունակ անձրևների պատճառով»:

ԿՕՋՕՐՈՅ մեղ գրում են: «Լսվում է որ նահանգապետ Զիւլեյխանի առողջութիւնը լաւանում է: Հիւանդը, որը մինչև այժմ պառկած էր, այժմ վեր է կացել և սկսել է փոքր ինչ մանդալ»:

Մեզ պատմում են թէ Թիֆլիսի Ներսիսեան թեմական զարդը վերջին երեք չորս տարիներից ի վեր կատարեալ խառնակ էր զորութեան մէջ: Անհամաձայնութիւն ռուսացիների մէջ, ռուսացիների տեսչի դէմ լարած ինտրիգաները, աշակերտների անհամաձայնութիւնը ռուսացիների ու տեսչին, այդ բոլորը մի սովորական բան է դարձել այդ զարդու: Բարեխղճութեամբ պա-

շանակութիւն է տալիս: Բայց մոթը կոտւում է: Յանկարծ մի այնպիսի թանձր խաւար է ընկնում երկրի վրա, որ մի ժամ առաջ աչքիդ ղեկաց կանգնած սարը կ'անվում է, անյայտանում: Եւ հարաւային գիւղերից այդ խաւար ուղիքներով մէջ միայն ասողներն են, որ հանդարտ պղպտւում են, ասողները, որոնց համար ոչ օձ կայ, ոչ աւերակ: Գնա քնիւր, և անպատճառ խօսք տուր քեզ, որ քնած ժամանակն այնքան արթուն լինես, որ օձի կամ ուրիշ թռչուններ միջատի դէպի քեզ դալը իսկոյն իմանաս և անձը ազատես... Ի՜նչ լուր:

Արշալոյսը զարթեցրեց ծիծեռնակին, որ նման էր մեր սենեակի առաստաղից կտցած բոյնի մէջ: անդադար կանչկոտում է, հանդիստ չունի: Վեր եմ կենում, նայում օձերի սարկին: Ո՛չ, երևում է որ այս ամառ ինձ չէ վիճակված տեսնել Շահանշահի խաչը մօտիկուց:

Մեր կառքը թուրք է դէպի յետ, մենք տուն ենք դնում: Ձիւները վաղում են, արեգակը վաղում է. ճանապարհը հետզհետեւ տաքանում է, մոխրի պէս մոշիւն մղում է անիւների տակից: Իսկ մեր առաջ հետզհետեւ բացվում են սարերի տեսարանները... Փանիրն են, որքան կապույտ են և մոխր: Ահա հեռու երևում է մի դաղաձի. չորս կողմից շրջապատվել է տիպիկ գոթերի ներքին քաղաքով. կարծում ես թէ այդ ահալին

բաղող ռուսացիները, որոնք իրանց ամբողջ ոյժով նուրբ են աշակերտների առաջադիմութեան գործին վարկ չունեն զարդի մէջ. իսկ ղեկավարը զուրկ, տղետ, մեծամիտ, ծոյլ ռուսացիները հաստատ բուն են ղրկ զարդու: Եւ իրանց վարմունքով կոտորում են հասարակութեան աչքում զարդի անունը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՄՐԻՍՅԱՆԻ

Կ. Պոլսի, 21 յունիսի

Վերջապէս Յարութիւն Պատրիարք մկրտիկոս: Երէկ կատարուեցաւ պատրիարքական տեղապահի ընտրութիւնը և Սիմօն եպիսկոպոս Սեփեան ընտրուեցաւ Պատրիարքական տեղապահ: Այս ընտրութեան վրայ բան մը չենք ըսել, վրան զի Սիմօն եպիսկոպոս պաշտօն սկստի վարէ մէկ կամ երկու ամիս, այնուհետև պիտի կատարուի պատրիարքական ընտրութիւնը:

Տեղապահի ընտրութեան համար փափազ կար որ ընտրուի այնպիսի եկեղեցական մը, որոյ պաշտօնավարութիւնը միանգամայն լինի փորձի զարդ մը և աղքատ տեսնէ թէ այդ տեղապահը պիտի կարենայ լաւ պատրիարքութիւն ընել: Բայց Երօնական և Քաղաքական ժողովները տարբեր մտածեցին: Նշեալ կը կարծէին թէ նշանաւոր եպիսկոպոս մը եթէ տեղապահ լինի, պատրիարքութիւնը աղանդաւոր է անոր համար, ուստի զգուշացան իրենց թուէները տալ այդ եկեղեցականին, որ ընդհանուր կարծեօք պէտք էր որ լինէր Նար-Պէյ խորէն սրբազանը: Ի՜նչ դիպուածներէ կ'սկսուի ունին շատ անգամ հանրա-յին գործերը: Նոյն երկուշաբթի առաւօտուն չեմ գիտեր որ հարուստ ոսկերիչը կամուսնանար և ամեն զո հարսանիքին էր Բեքալի եկեղեցին, և երբ անտին ընտրութիւն պիտի կատարուէր, ժողովականներէն շատերը եկեղեցւոյն մէջ հարսանիք կ'ընէին, ապա թէ ոչ տեղապահին ընտրութիւնը տարբեր եղ պիտի ունենար:

Նորնոր տեղապահ, Երօնական և Քաղաքական ժողովներ, լրագրութիւնը, հանրային կարծիքն, ամեն ոք կը փափազի նոր Պատրիարքի ընտրութիւնը: Եւ ամեն ոք կը հարցնէ՝ ո՞վ պիտի լինի նոր Պատրիարքը:—Բայց մինչ ժողովուրդը կը հարցնէ և մինչև իսկ մատնանիլ կ'ընէ նոր Պատրիարքն, անտի Աղբալին ժողովոյ անդամը մեծամասնութիւնը չուէր առայժմ ան-ձի վրայ խօսիլ, այլ կը հարցնէ թէ ինչ ուղղութեան պիտի հետնի նոր Պատրիարքը, ինչ պիտի լինի նորա քաղաքականութիւնը, ինչպիսի բարոյական յատկութիւններով պէտք է որ օժտեալ լինի: Այսպիսի մտածութիւնները պակաս չեն, և սա-կայն որքան ալ մտաւիպար Պատրիարք մը ստեղծենք, բայց և այնպէս իրականութիւնը կը ցուցնէ, որ եղածներէ մէջէն պէտք է առնենք: Եւ կը խորհուի թէ այդ եղածներէն ձրն ունի այդ յատկու-

բարձրութեան վրա, մոթ քաղաքականութեան և կայսրոյ ծախներում յաւերժական կախարհները գոհեր են բերում լեռների վրիթարի ողուն: Զո-հարաններից մոթը բարձրանում է, բարձրանում. մի մարդ հասել է երկնքին, որ այնպէս բարձր կան է ընկած, միւսը մարդ սողում է սարի կողմերի շուրջը: Ո՛ր սաքն է դա: Ես չեմ մոռանում Շահբուլաղը Ռեբեկայի ինչ պէս... Աղբիւրների թաղաւոր թէ թագաւորի աղբիւր:

Մեծ է, աղբիւրների թաղաւոր է, խօսք չը կայ: Բայց և ճշմարիտ շահի աղբիւր է և ոչ թէ շահի, այլ շահանշահի... Աշոտի որդու: Ո՛րտեղից որտեղ է եկել: Շիրակից խաչէն... հեռու է: Եւ ինչու է եկել: Աղբիւրը այդ աւերակը չէն ժամանակ սահմանադրէր, թէ յետագային չէն ժամադրած ամբողջութիւն էր, թէ յետագային հոգու ուստի տեղ... Ինչ որ է, կայ, այժմ կանգնած է և նրա վրա սողում են անթիւ օձեր... Օձեր, որոնք բռնել են այն բռնակալների տեղը, որոնց սուրը ջնջել է այդ կողմերի կեանքը: Կենդանի օրինակ անմիտ բռնակալութեան. մարդկանց ոչնչացնել, օձեր բռնակցել: Ինչու են այդ չարերը այնտեղ հաւաքվել և ամեն օր թոյն են թափում մեծ աղբիւրի մէջ... Թաղաւոր բարձր կնքած է այդտեղից: արդիւր թաղաւոր, օձը թագաւոր, աւերակը թագաւորի:

Հընչ, էլի մի սար երեաց, որ ծխում է առաւօտեան հանդարտ օդի մէջ: Գալուստ քաղաքները

Թիւրքիան: Առ այժմ ի տես դրած երեք եկեղեցականներ կան, որոյմէ մին պէտք է լինի Պատրիարք, եթէ վերջին ժամուն չորրորդ մը չը ստեղծուի: Այդ երեք եպիսկոպոսներն են՝ խորհրդան Մատթէոս, Չախկան Բարթողիմէոս, Նար-Պէյ խորէն: Առ այժմ Աղբ. ժողովոյ մէջ ամենէն նուազ թուէն խորհրդան եպիսկոպոսն է, բայց ամենէն աւելի անոր համար հաւանա-կանութիւն կայ, որ ընտրուի թէ ինչպէս—Նար-Պէյ խորէն սրբազան, որուն համար կարելի է ըսել թէ ժողովրդին ընտրելին է, ամեն եկեղեցականների աւելի թուէ ունի: Աղբալին ժողովոյ մէջ, բայց թէպէտ շատ թուէ ունի, բայց ոչ այնքան թուէ, որ մեծամասնութիւն կազմէ: Նար-Պէյ սրբազանէն վերջ ամենէն աւելի թուէ ունի: Բարթողիմէոս եպիսկոպոս—Պրոտայի առաջնորդը—բայց նա ևս մեծամասնութիւն չը կըր-նար ունենալ: Այդ առաջին թուէարկութենէ մը վերջ, երբ ոչ Նար-Պէյ, ոչ Բարթողիմէոս եպիսկոպոս մեծամասնութիւն ստանան, շատ հաւանա-կան է, որ Բարթողիմէոսնայ, կամ անոնցմէ մի մասն իրենց թուէն խորհրդանի տան, բայց ոչ Նար-Պէյ: Խորէնները ալ մասամբ իրենց թուէն կրնան խորհրդանի տալ երկրորդ դարձ թուէարկութեան միջոցին և այսպէս, ի հարկէ ստիպեալ մեծամասնութիւն մը գոյացնել ի նպաստ խորհրդանի:

Առայժմ այս հաշիւները ճիշդ են. սակայն երեսիօսանական նոր ընտրութիւններ կը կատարուին, պակասներուն յաջորդները գալու վրայ են, մօտ 30—40 երեսիօսանք կ'ընտրուին, և ասոնք տեսնելը ինչ կարծեաց տէր մարդիկ են և—մինչև վերջին օրերը շատ փոփոխութիւններ կրնան ըլլալ: Առ այժմ թէ Բարթողիմէոսնայ և թէ Նար-Պէյնայը ջերմապէս կաշխատեն թուլ մեծամասնութիւն կը կազմեն Նար-Պէյնայը:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Մեզ հաղորդում են, որ Կ. Պոլսի պատրիարքի հրաժարականը ընդունվից սուլվանի կողմից և վաւերացվից նրա ընտրութիւնը, որպէս Երուսաղէմի պատրիարք: Գունիսի 16-ին, հինգշաբթի օր, սուլվանի իրադէն հաղորդվից պատրիարքին: Գարութիւն եպիսկոպոսը շատ գոհ է: Անմիջապէս յունիսի 20-ին, կրօնական և քաղաքական ժողովները գումարվելու հրահրվեցան, որպէս զի ընտրեն պատրիարքի տեղապահին, որը պէտք է պաշտօն վարէ մինչև պատրիարքական նոր ընտրութիւնը: Կրօնական և քաղաքական ժողովների մէջ զանազան կուսակցութիւններ կան: Ատենապետ Սիմօն-պէյ ցանկանում է Պրոտայի առաջնորդ Բարթողիմէոս եպիսկոպոսին պատրիարք ընտրել տալ, ուրիշները Նար-Պէյ խորէնի կողմնակիցներ են, իսկ եթէ ոչինչ համաձայնութիւն չը կայանայ, երեք պէտք է աշխատեն ընտրել Սիմօն եպիսկոպոսին, որը յայտնի է որպէս չէզոք և անգոյն մարդ:

Բարձրանում են, բարձրանում, ամեն կողմից բռնում են սարի գագաթը: Այնտեղ այրող արև չը կայ, այնտեղ օձ չեն տեսել: Բայց այնտեղ բռնացած է մշուշն ու խոտաւորութիւնը, որոնց մէջ փոքր, լուծվում է կեանքը:

Այստեղ կենանք տեղային եռանդով է գործում և եռանդով վերջանում, փչանում չոր կլի-մայի տակ. մեծանում է դուր արագութեամբ, մեծանում է դուր եռանդով: Իսկ այնտեղ կենանք մեծանում է շատ ծանր, շատ դանդաղ կերպով, բայց իր նպատակը դեռ չը յայտնած, փոքր է, ընկնում: Ոչ դի համար ծածուկ բան չէ, որ Շահբուլաղի օձերը իրանց եսամոլութեան մեծ մասը տուել են այն սարի ընտանիքներին. եսամոլութիւն, որ այստեղ արիւր տակ է աւերում: Զործում, իսկ այնտեղ ջրի և թաղութեան մէջ: Այդ սարի միջոցովը դարմանալ է. տարին տա-սին իրիւր ամիս նրան ձեղքում, պատուտում են սոսկալի կայծակները անձելի դուռում—աղաղակ-ների հետ, բայց մշուշ իր ծանր մեղակութեամբ միշտ կայ ու կայ: Տես, ահա գոյութիւնները բար-ձրացան, գագաթը ծածկում են, իրանց սառց-նոդ, խոտաւ մարմինները քաշքշում են այդ խեղճ ժայռերի վրա... Նայիր, տես:

Գա ինքը մեր Շուշին է:

